

### ՄԼԲ.

Այս վաւերագրին մէջ յատկապէս դիտելի է Մխիթարայ մեծութեան և իր Միաբանութեան ծրագրին ուղղութեան գովքը յօգուտ Եկեղեցւոյ և Ազգիս:

Բաց աստի՛ հոս կը յիշատակուին Սոյ Հայ կաթողիկոսէն տրուած հրահանգներուն ազգային փնասները՝ իրենց պարագաներով:

Գերշարգելի արքայազոր մերոյ տեսնե տեսնե Ստեփաննոս բարունասպետի  
համբուրիւ աւոյն ողոյն ի Քրիստոս

... Ուղղափառ ոմն ի յունաց ազգէ՛ սակաւ ինչ վարժեալ յաստուածաբանական իմաստս՝ յետ խօսելոյ ընդ մեզ տաճկերէն ի վերայ նուրբ ինչ խնդրոց աստուածաբանութեան, և ընդունելոյ զլուծումն տարակուսանաց, բազում անգամ երանի ետ, և ասէ, զլոյս պայծառ և անշիջանելի ծագեալ է ազգիդ, հայոց բաբունապետն Մխիթար. իսկ սոքա [Լիբանանցիք] այժմ ոչ կամին լուսաւորել, այլ ցանկան ֆաւ ի խաւարին տգիտութեան իւրեանց: Եւ այն ոմն յուղղափառ յունաց, որ իբրև թէ սիրահարեալ է ի վերայ մեր, վարժ ի փիլիսոփայութեան, այր խորհրդական և երևելի յիմաստս գիտութեան, յետ խօսելոյ ընդ մեզ բազում անգամ, յաւուր միում ասէ, պարզև մեծ շնորհեալ է Աստուած ազգիդ ձերոյ, զոր եթէ թողցեն ելանել ի ձեռաց իւրեանց, արհամարհեն զշնորհսն Աստուծոյ: Մտնոնի քահանայ մի զարմացեալ ի վերայ... նոցա, ասէ, այժմ կարօտ են նոքա ուսումնական անձանց. և զիմրդ այսպէս վարին ընդ ձեզ: Եւ ոմանք ևս ասին. ցանկան ուղղափառ հայք առնուլ զմի յեկեղեցեացն հայոց, և զիմրդ թողուն զձեզ, որովհետև ինքեանք ոչ գիտեն՝ ոչ զլեզու և ոչ զերզս հայոց:... Պատճառ գալստեան կաթողիկոսին [Սոյ] ի Հալէպ՝ այս է, զի յերկոտասան ամաց հետէ երեք վարդապետք յափշտակեալ ի միմեանց զառաջնորդութիւն հալպու, բազում խռովութիւնս յարուցեալ են ի քաղաքիս. և մին ի նոցանէ, որում անուն է զաբրիէլ վրդպ. որ առաւել քան զայլս կալեալ զառաջնորդութիւն, բազում ամս ոչ է առաքեալ զտարեկան հասոյթս առ կաթողիկոսն սըտոյ. վասն որոյ յանցեալ ամի եկեալ կաթողիկոսն արքունի հրովարտակաւ ի հալէպ, ընկեցեալ է զնա յառաջնորդութենէ: Եւ ինքն մինչև ցայժմ նստեալ է ի քաղաքիս պատճառաւ ժողովելոյ և վճարելոյ զպարտս ժամու, քանզի ժամն հայոց պարտական է քսան քէսէ. և ազգն ևս պարտական է քսան քէսէ, զոր արկեալ է ի վերայ նոցա զաբրիէլ վրդ.ն ի պատճառ հալածանաց, զոր յարուցեալ է ի ժամանակին, յորում դարձեալ են յուղղափառութիւն երեք քահանայք և մի ևս սարկաւազ: Արդ կաթողիկոսն ժողովեալ իբրև 18 քէսէ յաղքատ ժողովրդենէ վասն վճարելոյ զպարտս ժամուն, յինքն է գրաւեալ զամենայն, զորս և առաքեալ է լո[ւ]մայափոխութեամբ յայլ քաղաք. և այսու ևս ոչ շատացեալ շաբաթ ի շաբաթ է պէտքս պատճառ հնարեալ՝ զհետ է հաւաքելոյ զգրամս, որով և տաղտկալի եղեալ է ամենայն ժողովրդեան, ոչ միայն վասն անյազաբար ժողովելոյն, այլ և վասն անկարգաբար խնդրելոյն, զի աւելի խնդրէ յանարգէն, և սակաւ ի մեծատանէն: Յիւրաքանչիւր ամսեան ասէ, թէ յետ ամսոյ միոյ գնամ, այլ չունի ժողովրդեան ի մէջ եկեղեցւոյ՝ առ ի ժողովել զձախս ճանապարհի. և յետոյ սկսաւ շինել ժողովրդեան ի մէջ եկեղեցւոյ՝ առ ի ժողովել զձախս ճանապարհի. և յետոյ սկսաւ շինել ժողովել զգին նորա. զաբրիէլ վարդապետն ընկեցեալ յաթոոյ գնացեալ է ի կոստանդնուպօլիս. և ի ձեռն մուրատողլու քասպար աղային ջանայ չարիս հասուցանել կաթողիկոսին: Իսկ զպարտս ազգին՝ ոչ գոյ որ վճարեսցէ. վասն որոյ և մեծ շփոթութիւն և տարակոյս է ի մէջ ազգին. և չեն ձեռնհաս դիւրութեամբ վճարել զիրսն:... Յաւուր միում պարոն յովսէփն (նախ քան զհիւանդանալ իւր) ի խօսելն ընդ կաթողիկոսին բանք